Digitally signed by
NARINE SAHAKYAN 7810620045
Date: 2023.09.14 13:00:26

<<Վանաձորի Ա. Գրիբոյեդովի անվ.թիվ 11 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

Ռուսաց լեզվի և գրականության, անգլերենի մասնախմբի ղեկավարի 2023-2024 ուս. տարվա

անհատական

Աշխատանքային պլան

Մասնախմբի ղեկավար – Մ. Ենգիբարյան

2023-2024թթ ուստարվա ընթացքում նախատեսված աշխատանքները շարունակելու են կրել չափորոշչային կրթության կազմակերպման նպատակ : Դրա համար անհրաժեշտ է համակողմանի վերլուծել նախորդ տարիների նվաճումներն ու բացթողումները , առանձնացնել այն խնդիրները ,որոնց լուծմանը պետք է ուղղված լինի ուսումնական գործընթացի կազմակերպումը : Նշված խնդիրները ոչ միայն մ/մ նախագահի , այլ մեթոդմիավորման բոլոր ուսուցիչների հիմնական խնդիրներն են : Դրանք կներառվեն նաև մ/մ տարեկան աշխատանքային պլանում,քանի որ դրանց կատարումը ենթադրում է մասնախմբի ուսուցիչների համագործակցված աշխատանք , սակայն աշխատանքների վերահսկողությունը հիմնականում մ/մ նախագահի աշխատանքային պարտականությունն է : Աշխատանքների պլանավորումը պայմանավորված է ինչպես ուսումնական առաջնահերթություններից , այնպես էլ՝ նախորդ ուստարվա մ/մ աշխատանքների վերլուծությունից : Ընթացիկ ուստարվա աշխատանքների պլանավորումը նախնական է և ավելի տեսական , ինչը նշանակում է , որ կլինեն որոշակի լրացումներ և փոփոխություններ՝ կապված կոնկրետ կրթական խնդիրների լուծման անհրաժեշտությունից :

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Որակական նոր մակարդակի վրա բարձրացնել մատնանշված առարկաների դասավանդումը դպրոցում:

2.Բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը, լայնորեն օգտագործելով համագործակցային ուսուցման, նոր մեթոդների և մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները:

3.Ապահովել ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը՝ ՀՀ ԿԳՄՄՆ կողմից մշակված առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

4.Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցիչ – աշակերտ հարաբերությունների նոր՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմանը, աշակերտակենտրոն դասապրոցեսի կազմակերպմանը:

5.Շարունակել աշխատանքը ուսուցիչների մանկավարժական-մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ:

6.ՈՒսումնասիրել և գործնականորեն կիրառել մանկավարժական-մասնագիտական նորագույն նվաճումները՝ հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման, ստեղծագործական հաշվետվությունների և բաց դասերի միջոցով :

7. Մանկավարժների կարևորագույն խնդիրներից մեկը համարել՝ ժամանակակից մեթոդներով դասապրոցեսի կազմակերպումը և դասին յուրաքանչյուր աշակերտին իր հնարավորությունների չափով մասնակից դարձնելը, ապահովելով սովորողների՝ ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացումը:

8. Ավագ դպրոցի մասնագիտական հոսքային դասարաններում պրոֆիլային առարկաների դասավանդման բարձր մակարդակի և սովորողների կողմից նշված առարկաների լիարժեք յուրացումը՝ ըստ սահմանված ծրագրային պահանջների:

9. Դպրոցի սովորողներին, առաջին հերթին ավագ դպրոցի, նախապատրաստել դպրոցականների առարկայական օլիմպիադաների բոլոր փուլերին:

Նախանշված աշխատանքների արդյունավետ իրագործման համար անհրաժեշտ է .

- Նպաստել հիմնավոր և նպատակային գիտելիքների բազայի ձեռքբերմանը
- Խթանել աշակերտների հետաքրքրվածության մեծացմանը մ/մ առարկաների նկատմամբ
- Խթանել աշակերտների ինքնուրույն - ստեղծագործական մտածողության և հմտությունների զարգացմանը
- Նպաստել միջառարկայական և միջդասընթացային կապերի նպատակային կիրառմանը
- Օժանդակել դասավանդման ժամանակակից մեթոդների արդյունավետ կիրառմանը , ՏՀՏ-ի գործածմանը մ/մ դասերին
- Օժանդակել ուսուցիչներին ՝ ճիշտ կազմելու թեմատիկ , գործնական և այլ տիպի առաջադրանքները
- Պլանավորել մ/մ տարեկան և ընթացիկ աշխատանքները , պարբերաբար հրավիրել և անցկացնել մ/մ նիստեր
- Կազմակերպել առարկայական օլիմպիադաների ներդպրոցական փուլը , ղեկավարել մյուս փուլերին աշակերտներին նախապատրաստելու աշխատանքները
- Նպաստել տարբեր մրցույթներին դպրոցի լավ մասնակցությանը առարկայական մակարդակով
- Քիչ փորձառու և մեթոդական – մասնագիտական խորհրդատվության կարիք ուսուցիչներին օժանդակել փորձով , հնարավորության դեպքում ՝ նաև գրականությամբ

*Մեթոդիավորման նախագահն այս ամենն իրականացնելու մեջ ունի մեծ անելիքներ : Ինչպես դասավանդման արդյունավետությունն է կախված ընտրված ճիշտ մեթոդներից , այնպես էլ մեր աշխատանքում շատ բան կախված է նրանից , թե **ինչ** և **ինչպես** ենք անում : Աշխատանքային նախընտրելի մեթոդներն են*

- *Զրույց*
- *Մեթոդական խորհուրդներ*
- *Մասնագիտական գրականության ձեռքբերում և տարածում*
- *Առաջավոր և հաջողված դասերի պրակտիկայի տարածում*
- *Խորհուրդներ և առաջնորդություն*
- *Համագործակցություն մ/մ ներսում և այլ մ/մ-երի հետ*
- *Մեթոդական դասերի անցկացում*
- *Մ/մ նիստերի հրավիրում , խնդիրների քննարկում*

Մ/մ նախագահի աշխատանքների շրջանակը ներառում է մի քանի ոլորտներ , ինչպես օրինակ .
1.Ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպում և իրականացում
2.Ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպում և մասնակցություն
Այս տարվա ընթացքում նախատեսում եմ .

h/h	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Նշում կատարման կամ ժամկետի փոփոխութ. մասին
1	Վերաքննությունների առաջադրանքների կազմում և գործընթացի վերահսկում	օգոստոս	
2	Մ/մ նիստերի հրավիրում և անցկացում	յուր. ամիս	
3	Առարկայական թեմատիկ պլանների մասին խորհրդատվության տրամադրում	օգոստոս	
4	Թեմատիկ պլանների քննարկում և հաստատում	օգոստոս	
5	Մ/մ տարեկան աշխատանքային պլանի նախագծում , քննարկում և հաստատում	օգոստոս	
6	Վահանակի ձևավորման աշխատանքների վերահսկում	տարվա ընթացքում	
7	Առարկայական ծրագրերի կատարողականության դիտարկում	Դեկտեմբեր Մայիս	
8	Կարևոր և հիշարժան իրադարձությունների նշում / վահանակի ձևավորում , համադպրոցական դասեր , զրույցներ ,էքսկուրսիաներ /	ուստարվա ընթացքում	
9	Դասալսումներ , քննարկումներ , խորհուրդներ	Հոկտեմբեր-մայիս	
10	Առարկայական օլիմպիադաների ներդպրոցական փուլի նախապատրաստական աշխատանքների իրականացում	Նոյեմբեր - դեկտեմբեր	
11	Ուսումնական նյութերի ձեռքբերում , առկա նյութերի վերանորոգման կազմակերպում	Ուստարվա ընթացքում	
12	12-րդ դասարանների 2-րդ կիսամյակի նախաքննական կրկնության թեմատիկ պլանի կազմում	դեկտեմբեր	
13	10-11-րդ դասարանների փոխադրական քննությունների քննական առաջադրանքների պատրաստում և հաստատում	ապրիլ	
14	Փորձնական դասերի անցկացում 10-11-րդ դասարաններում՝ առարկայական ինքնավարության ներդրման նպատակով . << Դասը վարում են աշակերտները >>	Ուստարվա ընթացքում	

15	Համացանցի www.armedu.am, www.aniedu.am կայքէջերի, մասնագիտական ամսագրերի և թերթերի նյութերի ուսումնասիրում և քննարկում	Ուստարվա ընթացքում	
16	Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդատվություններ	Ուստարվա ընթացքում	
17	Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման, ընդհանրացման և ներդրման նպատակով ՝ փոխադարձ դասալսումներ կազմակերպել	Ուստարվա ընթացքում	
18	Փոխադարձ դասալսումների կազմակերպում և քննարկում	Ուստարվա ընթացքում	

1.09.2023թ / / Մ. Ենգիբարյան